ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 59

«29» 08 2025թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազի 1 թափուր հաստիքը Կոտայքի մարզի դատախազության դատախազի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին հավելվածի 2-րդ բաժնի 4-րդ գլխի 12-րդ կետի «Վարչության դատախազ 5» բառերը փոխարինել «Վարչության դատախազ 4» բառերով, «Ընդամենը 11» բառերը՝ «Ընդամենը 10» բառերով, իսկ 15-րդ գլխի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 141» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 140» բառերով,

2) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 29-րդ գլխի 111-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 3» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 4» բառերով, «Ընդամենը 15» բառերը՝ «Ընդամենը 16» բառերով, իսկ 33-րդ գլխի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 113» բառերը, «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 114» բառերով:

3) 1-ին հավելվածի 6-րդ բաժնի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 141» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 140» բառերով, իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 113» բառերը, «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 114» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ե. ԱՎԱԳՅԱՆ**